

ՊԱՏԱՍԽԱՆ

Ուղարք՝ տեսնելով որ ձին կպայտէին՝ ինքն ալ երկարեց ի ոտքը, կըսէ տաճիկ առածք, ո շատ յարմար կուգայ մեր Արօ Տէօքմէճիեանի պարագային՝ երինքն ալ տեսնելով այլ և այդիմակաւոր և անդիմակ կերպութաշչի վրայ յարձակողները՝ կհամարձակի իր . . . ոտքն երկարելու կայսի մէջ և կըզդրէ «Հա ազգն ու իր կղերը» վերնագրոյոդուած մը՝ որ երբէք յարաբերութիւն չունի վերնագրին հետ և որ սոսկ և վանողաբար յարձակում մ'է Արւաշչի վրայ, անշուշտ ոմանց հաճելի թուելոնպատակաւ :

Սուանց հպարտացած ըլլալու
կրնայինք մեր Տէր հայրին իբ
պատափսան սա երկու խօսքու
միայն գոհանալ, թէ Ադոռէլ և
+աքէն հասկա ! բայց աւելորդ չ
կարծեմ քանի մը խօսք բնե
մեր Տէր հօր գրութեան վերա
բերութեամբ, քանի որ իր շուրջ
առին ետեւ պահուած կը գըտ
նուին կրօնական ժողով մը, ահաէն
եկեղեցական անձնաւորութիւն
մը և ուրիշ ոմանք, որոց հրա
մանաւ շարադրուեցաւ նաև կրօ
նական ժողովոյ մեղ ուզզած որ
քան անպատեհ նոյն քան ծիծա
ղելի Աշտարական թէնք : Այս պարա
գայն չուրանար կարծեմ մեր Տէ^ր
հայրը, երբ ըսեմ իրեն թէ ին.
քըն իւր բերանով խոստովանած
է տեղւոյս նշանաւոր ազգային
ներէն մէկուն, այն պահուն՝ ուղ
մէկ քանի ուրիշ քահանայից հետ
միատեղ այցելութեան կ'երթաց
յիշեալ անձին տունն անուան
տօնին առթիւ : Եւ որպէս զի չ
կարծուի թէ առա կը են, և ուրա
ռնեն և այն, կը հրաւիրենք մեր
Արքանապատիւը որ կուզէ՛ պաշ-
տօնապէս կուզէ՛ ոչ — պաշտօնա-
պէս ինզրէ մեզմէ սին անձին
անունը՝ որու ինք ըսած է թէ
կրօնական ժողովոյ Աշտարական
քանի մը երեւելիներու ստիպ-
ամբ գրուեցաւ : Ուստի, կ'ա-
ղաչեմ թող չմոռնայ Արք. տէր
Հայր Կարապետ Տէօքմէ ճիեան
քահանայն հարցունելու մեղ այդ
մարդուն անունը, որ անձամբ
պատմած է մեղ այդ խօսակցու-
թեան պարագաները, զորս զանց
կընենք այս տեղ նկարագրելու :
Դառնանք ուրեմն ին գրոյն :

թէ՛ ի՞նչ կը հասկնայ Տէր կա-
ռապետ հայ ազդով և իր կղե-
ով, — մեր գրութեան ընթաց-
քն իր մէջ պիտի պարունակէ առ-
ող պատասխանը։ Մեր Տ. Տէօք-
էշ ճիեան կղերը և Տակասին բուն
անդրոյն չմոտած կանխաւ կը յայ-
ռարարէ թէ իւր նպատակը չէ
եւշլոյ դէմ զինիլ, որ արդէն
արեւորութիւն չունի (Քարեւ,
շ! . . .) ոչ ալ միտք ունի Դեր.
Ենքիսեղեկը պաշտպանել, որ
մասւ իր պաշտպանութեան կա-
ռատութիւն չունի, այլ հարկ կը
համարի եղէր ինդիրը տարբեր
էրափիւ քննութեան առնուլ։ »
Աւատի մեր՝ Մելքիսեղեկին կա-
ռողիկասութեան արժանի չըդա-
ռելիս ու Ներսէսն այդ պաշտօ-
նին իրմէ աւելի յարմարադոյն և
արժանաւոր կարծելիս իր բա-
ռիլոնեան գրութեան հիմ դնե-
սվ՝ իր թոյնը նախ Ներսէսի վը-
ռայ կը թափէ, առանց ռակայն
նելքը համելու մեր տէր կա-
ռապետ կղերին՝ որ այդ Ա.քիլ-
էսն Ներսէս՝ իւր նման մարդոց
ժոյնէն կամ սուրէն անվիրաւու-
ուլի է, վասն զի նա, Ներսէս,
Թէթիսի կողմէ՝ որ հայ ազդն է՝
Մթիքսի՝ որ իր դործերն են՝ մէջ

մուծուած է , ուստի Տէօքմէճի-
եանի և իր նմաններու զէնքելը
չեն կարող վիրաւորել Ներսէսի
և ոչ մէկ տեղն՝ եթէ ոչ
գարշապարը , ինչպէս Աքիլէսի :

Տէր Տէօքմէճեան , պահ մը
կուղէ ինք ևս համակերպիլ Սրբ-
ւո՞ի և կը համարի թէ Ներսէս
բարձրացաւ յաթոռ կաթողիկոս-
ուութեան : Յետոյ կը հարցունէ
թէ ազգն ի՞նչ օդուտ պիտի քա-

դէ Ներսէսի կաթողիկոսութենէն
Այս Հարցման ինքն իսկ կըպա-
տասխանէ տէր Հայրը, և վճռո-
ղապէս կըսէ . «Ոչինչ», Քանզի,
կըփառաբերէ , ինչ օգուտ որ
քաղեց ազգը Նորա Պատրիար-
քութենէն , նոյն օգուտը պիտի
քաղէ Նորա կաթողիկոսութենէն:
Անմիջապէս յետոյ նորէն կը հար-
զունէ թէ՝ հնաւու նեասէս ոտ

ցուռնէ թէ ի նչու ներսէս բազմիցս հրաժարեցաւ զղուանօք, թէ էր բազմիցս անարգեցաւ և վըշտացաւ, թէ՝ ոչ ապաքէն նոյնն լինելու է նաև ի կաթողիկոսութեան նորա ևայլն ևայլն :

Այս հարցումներն ընկելէ ետեւ, տէր կարապետ, Հայ կղերին պատոյն ու փառաց նախանձախնդիր և կոճակէն կարմրող իսկ սակիէն ճերմկող այս հոգեօրականը, վերջապէս Սամասարի դաշտին այս արժանի գործաւորն այդ հարցումներն՝ ընկելէ անմիջապէս ետեւ անակնկալ կերպով սրտի դառն ցաւ կը,յայտնէ, ազգին մէջ առ կղերն հակակրական ոգի մտած տեսնելով: Բայց, թէնչ է խնդիրն, ուրիշ մտանք և ուրիշ պիտի ելլենք: Ատի քիչ փոյթ է, Արդէն այդ տեսով Բարելնեան գրողներ՝ Ապեղէսէն առած են իրենց պատասխանը: Եւ ապաքէն ժամանակին մեծ կորուստ մ'էր մեզի համար այդպիսի տնձի մը այդպիսի գրաթեան պատասխանելու զրադիլ, եթէ չընշմարէինք իր ետեւը պահուողներն՝ որք միշտ տկարներն ու իրենցմէ նիւթական ևայլ շահու կարօառթիւն ունեցողները կընարեն իրանց գործիք: Թող ընտրեն և թող ուրիշին բերանով խօսին, հոգ չէ, եթէ խնդիրն ըստ ինքեան նուազ կարեւոր և մամնաւոր բան մ'է: Բայց երբ, Սրբացան ու զայլս բամբասնելու կամ հարուածելու պատրուակաւ ճանբայ կ'ելլէն ու բառերն ոլորերով գլորելով կաթողիկոսութեան և հետեաբար ներսէսի և Մելքոնի վրայ կըդարձունեն,

միթէ հնար է անտեսել այն թա-
գուն նպատակներն որք յաճախ
երեան ելած են . . . :

Արդ, անդամ մը տէր Տէօք-
մէնեանի այդ Լաբիւրինթին մէջ
ինկած՝ ջանանք Արիանի թելը-
չկորսունցել և հարցունել, մենք
ալ ըստ մեր կարգին, թէ տէր
նարապետ և իւրայինք ո՞ր մա-
սին և ո՞ր պարագային մէջ ազ-
գին օգտակար չեն տեսած զներ-
սէս կամ օգուտ չեն քաղած
նորս Պատրիարքութենէ : Ար-
դեօք այն խնդրոյն կամ պարա-
գային՝ որոյ վրայ խօսիլ արգել
կըդնէ մեղ արդի քաղաքակա-
նութեան կացութիւնը, և զորմէ
շատ խօսեցան անցելոյն մէջ՝ քա-
ղաքագէտ և հեռատես կար-
ծուող կամ կարծուիլ ուզող Հայ
թերթեր և մոլար շաւզի մը մէջ
մտած ըլլալ քարողեցին զներսէս
Պատրիարք, Ասով մինչև մէկ
աստիճան յագուրդ արուեցաւ
կրից : Բայց եկու տես որ, դքժ-
քաղզութիւնն ու ցաւն են աշ-
խարհիս վրայ իրական եղողները:
Յազմութեան ցնծութիւնն ու աշ-
խոր արգասիքն եղող երջանկու-
թիւնը միշտ վազանցուկ են Եթէ
Ներկայակի ժողովում վարդապետու-

թեան արժանապատուութեան
դպչելէ , Եռփէնհաւէրի հետ
պիտի գոչեի գոնէ վայրկեան մը
թէ , «Եթէ Աստուած մը ստեղ-
ծեց այս աշխարհս , երբէք չպի-
տի ցանկայի որ ես ըլլայի այդ
Աստուածը , վասնզի աշխարհիս
դժբաղդութիւնը կամ ցաւը սիր-
աբս պի յօշոտէին : »

եղած հարուսածներէն դդայուած
ուրախութիւնն արագ շիջաւ նոր
վիշափ մը ծագումով՝ ի՞նչ էր
այդ նոր վիշտը, ի՞նչ բանէ ծա-
գումն առաւ այն, — Դէօրդ կա-
թսզիկոսին մահէն, մահ մը՝ որ
թո՞ղ թէ ինքնին վիշտ մ'է,
ազդին կենառական ուրիշ խնդիր-
ները առաջի մ'իվեր իր գալար-
եան պահի թոռի մասնաւն չտ

եւամբ բարձի թողի նեալուն համար՝ այլ նաև վիշտ մը՝ որ առաջ կուգար ներսէս Պատրիարքի անոր յաջորդելու կամկածէն, վասնզի եթէ ներսէս յաջորդէ Գէորդի, ալ ևս իրականութիւն ըպիտի գ.մնէին այն գաղտնի նպատակները, զորս մենք մասնաւոր անձներու սոսկական հաճոյքը (Քու քու քու) միայն կը-նկատենք և ոչ այլ ինչ, Սակայն այդ անձեր՝ ազգին շահերուն և օգուտին պատրուակին իրը քող ձգելով իրենց հաճոյից և իրենց ներկայ ու ապագայ անձնական շահուց և օգտից վրայ, այնպիսի ճանրայ մը կըբռնեն, այնպիսի ուզի մը կ'ուրուտգծեն իրենց արբանեկաց շլոցեալ աչքին առջեւ, որ հեշտիւ կըբռնեն անդ, քիչ մը յետոյ զջալու՛ կամ եթէ ոչ խարուելով այլ համազմամբ մոտած են՝ ազգին ուռնը քանդ ու աւեր տեմնելով խնդացու համար։ Բայց այս խնդիրն աւելի լրւուրանութեան և աւելի պարագաներավ պարզելու կարու ըլլալուն համար ուրիշ յօդուածով խօսելու կըմիջրապահենք և կըդառնանք յօդուածով այս անձի գէմ՝ որ այսօր մի ամբողջ վիճակի Առաջնարդէ . . . եայն ։

ութեան կը հաւատայ (ի՞նչ կը-
սեմ քրիստոնէութեան պաշտօն-
եայ մէն նա) հարկ է որ չը չա-
րախօսէ այն անձի դէմ՝ որ այս-
օր ամբողջ Հայ աղջին Պատրի-
արքն է : Եթէ տէր Կարապետ
Քրիստոնէութեան կը հաւատայ՝
հարկ էր որ . . . տարիներով
քէն և առելութիւն չդահէր քա-
հանայից և Ա. Ստեփաննոս Եկե-
ղեցւոյ դէմ և այժմ ալ չպահէ
այն անձանց դէմ՝ զօրս ինք գի-
տէ : Տէր Կարապետ Ա. Դիքք չը
կարդար միթէ սորվելու համար՝
որ Քրիստոնէութեան հիմնադիրն
ու անոր աշակերտներն իսկ ա-
ռեւը մարդ չմտած հաշտուիլ կը
պատուիրեն քրիստոնէից, և կար-
եմ այս պատուէրին աւանդա-
պահն ու գործակատարը կզերա-
կաններն են : Եթէ տէր Կարա-
պետ Քրիստոնէութեան կը հա-
ւատայ, հարկ է որ Քրիստոն-
եայ Եկեղեցւոյ աւանդած ու կը-
տակած խոստովանանքի կամ ա-
պաշխարանաց ժշային համնդանա-
կըն իր ամբողջութեամբ կարդայ-
լ չը յապատէ անոր մէջ դժնը-
ուած քանի մը ծանր մեղաց ա-
ռունները՝ առարկելով թէ ինք
այս մեռան տէրը չապահն հա-

մար չկընար կարդալ։ Մի՛ դու-
ցէ տէր Կարապետ լուելեայն ըն-
գունի թէ, իրմէ զատ՝ ամբողջ
անցեալ և ներկայ հայ կրօնա-
կանք, որ հակառակ իրեն կ'ար-
տասանեն այդ մեղաց տնօնններն
ալ, նոյն մեղքելը գործած են
և կը գործեն . . . : Եթէ տէր
Կարապետ քըհստոնէ ու թեան կը
հաւատայ, փոխանակ պղնձէ կո-
ճակէն կարմիւլու, կարմիր իւր
այն ընթացքէն՝ զոր ունեցած է
իր հոգեւոր եղբարց կամ պաշ-
տօնակցաց և այլոց դէմ, թէեւ
չենք ուզէր պարագանելու մէջ
մժնել անհամար եթէներ շարե-
լով, այլ է սակայն՝ եթէ առիթ
տայ։ Գոհ ըլլանք ուրեմն այսօր
այսքանով որ արդէն երկարե-
ցինք յակամայ։

(Պատմագույն)

Պ. Հարցոյէ նամակին շաբանակութեանը

Այս բաւական չէ, այլ երբ
մէկ կողմէն արդի ջնուեսկան
խորհրդոյ անդամոց թիւը շատ
անբաւական կըդառնուի, բայ ո-
բաւմ թէև Սահմանադրութեան
հրահանդին համեմատ ջնուես-
կան խորհրդոյ կազմութեան հա-
մար երեք թիւը իրը նուազա-
գոյն թիւ ցոյց արուած է՝ բայց
այդ թիւ շատ օրինաւոր չէ առ-
բեկան 4—5000 լիրայի մատա-
կարարութեան համար, և երբ
միւս կողմէն արդէն իմ յայտնած
ի՞նչ ի՞նչ պատճառներով նոյն
խորհուրդը շատ անյարմար կը-
տեսնուի, անոր անդամներէն ա-
մենէն անվստահելի ուստի և ա-
մենէն անարժանին կըյանձնուի
նաև կըթական խորհրդոյ անդա-
մակցութեան կամ աւելի ճիշդն
է ըսել ամբողջ կըթական խոր-
հրդոյ փափուկ պաշտամը։ Ես
կըփափաքէի գիտնոլ թէ այդ-
պարոնը ուր տուեր է կըթութիւն,
ուր ուսեր է տնտեսականութիւ-
նը, քանի որ 42—43 տարեկան
դպրոցէն մեկներ է։ արդեօք
ուեւանին քով թէ այլուր երջան-
կարտ դործունէութեամբ մը։
Կրիստովի պաշտօններ ժողովը-
դեան համակրելի անձերու միայն
կըտրուին։ Ժողովրդեան համա-
կրութիւնը հանրօգուտ դործե-
րով և երկարատե ու անբասիր
պաշտօններով կ'ստացուի։ ան-
ձանօթ և անհշան անձեր համա-
կրելի չեն կընալ ինիլ երեք. ք։
Եղիսաբետ առաջնորդ է եւ կ'ստացուի։

Եթէ այդ պարզնին և իւր ընկերնին կրկնակի պաշտօններ կը յանձնուին , արդէն նորո եղաքայրն ալ երեսփոխանական աժոռը կը բարձրանայ , թէ և ճիշգմինոյն օրը նոյն աժոռու կը կոռուսէ բալոր իւր պատկառելիութիւնը , վեմութիւնը , նուիրականութիւնը և պրութիւնը , ըստ ըրում նորընափիր երեսփոխանը մի քանի տարի առաջ առեւանդութեան համար ամրաստանուեր և ազգ . վարչութեան կողմէն 100 ոսկի տուգանք վճարեալ գատապարտուեր էր՝ նոյն իսկ թեր . Մելքիսեդեկի օրով . և այս լինու տեղի տուեր էր հայրապարանութեան . . . :

Նատեր գիտեն որ այս վճիռ աւելի նպաստաւոր էր ամրաստանեալին քանիմէ ամրաստանով կողմին . բայց և այնպէս ամրաստանեալն թէեւ առ հարկի կը սփիպուի որոշեալ գումարը վճարել ում որ անկ է , սակայն առանց յիշեալ կէտը կարենալ դիտանալու՝ ոչ միայն ինչպէս ինքնայրը ոչ միայն ինչպէս և իր եղբայրը արաւունջու բողոք կը յայտնեն Ս. Առաջորդին դէմ , այլ նաեւ անլուր հաւաքանաթեններ , և գումար ուն

տյնպիսի սրճարաններու մէջ, որ
խօսակցութեան ամենչն օրինա-
ւոր կերպը այս ձեւն է . . այս՝
Ս. Առաջնորդը կը քամահրեն, կը
թշնամանեն և կը հայիսյեն մին-
չեւ որ աղդ. ժողովներու և խոր-
հուրդներու դանեցը իրենց ա-
կանջին կը կռնչեն, մինչեւ որ
աղդ. պաշտօնատունէն անուշ զե-
փիւռ մը կը փչէ իրենց պաղ այլ
բարկութենէ կրաի գարձած ո.է.մ.

քերուն, մինչև սր ընտիր և հագուագիւտ պաշտօնեայներ կը հըս բաժարին պաշտօններէ՝ աւելի յաշ ջողակներու թողլով կատարել կամակատարի դերը, մինչեւ որ այս թափուր պաշտօններուն և աթոռներուն ինչպէս ուրախալիք նոյնպէս և յօյուր կը բերէ իրենց վազեմի չուկայական պաշտօնակից կամ արևետրուկէց մը, զրդ երբ պիզդ ձեռքերով իրենց ճողուատ աշերը կը որբեն ու ծանօթ, բարեկամ, բարերար մը (կամ ընկերուիկիցներ որ սոսկ բարերար կրնան նկատուիլ) կը ճանաչն, պահ մը կը շուտարին իրենց սըխալ ըմբռանման վրայ, եթե ու ամօթ դէթ զեզչ կըզզ ան իրենց անդամակառ ու անիրառ հայհույութիւններուն համար, զեզչ զրո աւելի իրենց տածած յայսերը ի դերեւ հանելու երկիւլզ կրնար ըստուիլ, քան թէ օրինաւոր և արդար խցեն մը խայթը . բայց ինչպէս որ իրենք ի վերջոյ իմացան այդ երկիւլ շատ անտեզի էր, քանի որ սոսրին սրճարաններու ձայնը չէր կրնար մինչեւ Ս. Առաջնորդին ականչը համանիլ, գեռայն ժամանակ ազդ. Առաջնորդարանն ամեն տեղ չունէր բաներերներ և բաց աստի եթէ այս արտունչ և հայհայնք ըստէ իսկ՝ իմ միշած պաշտօնակիցը կրնար գիւրաւ ծածկել ամեն ինչ յօցուտ և ի պէս երկու կողմէն ալ:

Սակայն ի նչ որ ալ ինի՞ այս
յոյսեր իրականութիւն կը դրա-
նեն , նորընտիր պաշանեայներ
նոր լևու կը զ ործածեն , մինչ
իրենց անցեալը Դեր . Մելքիսե-
դեկի սրբարար զօրութեամբ կը
մաքրուի , կը զտուի և կը որդուի ,
ուստի և հայրառպանութեան ո-
րուականը այնքան վախ չ'ազգէը
մեր մի երկչու երեսփոխանին
որքան ժամանակ մը Ներսէսի
պնակեն կ'ազգէր :

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎ
Մայրուքողաքին թերթերը
լուր կուտան և երկտրօբէն կը-
պատմեն անցեալ երկուշարժի
օրուան Եկեղեցական Համագու-
մար ժողովը նիստը, զոր ըրած
է Կաթողիկոսական եօթն ընտ-
րելեաց ցանկը պատրաստելու
համար :

Ժողովը դումարէր է Գումար-
ռուի Մայր Եկեղեցւոյ մէջ, ուր
եերկայ են եղէր նաեւ հանգի-
տականաց խուռն բազմութիւն
մը :

Ստեանը բացուէր է Տարանոյ
Առաջնորդ Գերապատիւ Ալէաթ-
եան Քրիդորիս Մըրագանի ա-
տենապետութեամբ : Ս. Պատրի-
արք Հայրն անձնական տկարու-
թեան պատճառաւ ներկայ չը-
դանուելով՝ ժողովին նախագա-
հէր է երւուազէմի Պատրիարք
Տ. Եսայի Մըրագան :

Գեր. Խորէն Նար - Պէտ Մըրա-
զան խօսք առնելով դեղեցիկ ա-
տենախօսութիւն մը կընէ, և
ի՞առաջարկէ ժողովը որ խղճի
հաօք, առանց որեւէ ակնկալու-
թեան ընտրեն այնպիսի ընտրե-
նելու որ կառ առաջիկ ու Տե-

